

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՄԱՆՈՅ ՄԷՋ

Գրեց՝ Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԼՈՒԽ Թ.

ՀԱՅԵՐԸ ԻՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՐԻ

ՀԱՅԵՐԸ, Ռուսանիոյ մէջ, կրնան պարծիլ իրենց առեւտրական անցեալով:

Արդարեւ ուսմէն երկիրներու առեւտրական զարգացումը բան մը պարտական է հայուն: Հայերն են եղած, կրնանք ըսել, վաճառականութեան հիմը դնողը մասնաւորաբար Մոլտովայի մէջ, ուր բնիկները հողագործ էին առհասարակ, եւ անվարժ առեւտուրի:

Եթէ հայերը կը պարծենան «իրրեւ հիմնադիրը մոլտովական եօթը քաղաքներու», այն իմաստով է որ իրենք էին առեւտուր հաստատողը այդ քաղաքներուն մէջ, զանոնք արտասահմանի հետ յարաբերութեան դնողը, զանոնք չէնցնողը:

Այնպէս որ հայ տարրին առեւտրական դերը պրպտել՝ կը նշանակէ քննել թէ ինչպէս զարգացան Մոլտովան ու Պուլքովինան: Այդ՝ չափէն աւելի պիտի ընդարձակէր մեր նիւթը, եւ մեզ պիտի մխրճէր մասնադիտական պրպրտումներու մէջ: Պիտի գոհանանք ընդհանուր ակնարկով մը: Այդ ալ բաւական է հայոց դերը ըմբռնելու համար իրրեւ առեւտրական տարր:

* * *

Մոլտովան տեսակ մը կամուրջ էր՝ ուրկէ կ'անցնէին Խրիմէն Կալիցիա գաղթող հայ կարաւանները եւ հետագային նաեւ հայ վաճառականները՝ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ իրենց առեւտրական երթեւեկին ատեն: Այնպէս որ ԹԳ. դարուն եւ անկէ առաջ հոծ թիւով հայեր կանգ կ'առնէին Մոլտովա ալ, եւ հետզհետէ կը կազմէին գաղթականութիւն ու համայնք, մասնաւորապէս որ հողը, ԹԱ-ԹԵ. դարերուն, գրեթէ գին չունէր Մոլտովայի մէջ, ու երկիրը կը գտնուէր առեւտրական այն նշանաւոր ճամբուն վրայ, ուրկէ հայերը կրնային արեւելքի եւ հարաւի անուանի ապրանքները քիչ ծախքով ներածել Լեհաստան, Արեւելեան Գերմանիա, եւ այլն: Հայերը, այդ շրջանին, արդէն իսկ համ-

բաւ ունէին իրր առեւտրական տարր, այնպէս որ Մոլտովայի հին իշխաններէն երկուքը, Ալէքսանդր-չէլ-Պուն (1400-1432) եւ Շիթֆան-չէլ-Մարէ (1457-1504) իրենց երկրին վաճառականութեան նպաստելու համար Լեհաստանի հայ վաճառականները եւ հոն ապրող գերմանները հրաւիրեցին իրենց երկիրը, խոստանալով անոնց շարք մը առեւտրական բացառիկ արտոնութիւններ: Անոնք սիրով ընդունեցին եղած հրաւերը եւ խումբով գաղթեցին Մոլտովա եւ Պուլքովինա: Ալէքսանդր-չէլ-Պուն նոյնիսկ մասնաւոր հրովարտակով մը (1407 Հոկտ. 8) արտոնութիւններ տուաւ Լէմպէրկէն եկող հայ եւ գերման առեւտրականներուն:

ՊՈՒՔՈՎԻՆԱՅԻ ՄԷՋ

Երբ Ալէքսանդր-չէլ-Պուն իշխանին 1407 Հոկտ. 8-ի հրովարտակով հայ եւ գերման վաճառականներ Լեհաստանէն Մոլտովա եկան երկրին առեւտուրը չէնցնելու, ամենէն աւելի Սուչովա, Սերէթ եւ Չէրնովից քաղաքներն էին որ ծաղկեցան:

Սուչովան ապրանքներու գլխաւոր մթերանոցն ու մաքսատունն էր: Երբ հայ եւ գերման վաճառականները Լէմպէրկէն Մոլտովա կերպասեղէն կը բերէին, Սուչովայի մէջ է որ կը վճարէին իրենց մաքսը: Լէմպէրկեան իւրաքանչիւր մեծ մարքի համար (25 դրուշ)՝ երեք դրուշ մաքս կը վճարէին: Մաքսը վճարելէ յետոյ վաճառականները իրաւունք ունէին կամ ծախել տեղւոյն վրայ եւ կամ արտածել Պեսարապիա ու Հունդարիա:

Մաքս կ'առնուէր այն բոլոր ապրանքներէն, որոնք Սուչովա կը բերուէին, կամ հոնկէ կ'անցնէին՝ ըլլայ արտասահմանէն ներածուելով, ըլլայ արտածուելու համար: Միայն եղներն ու ոչխարները կամ անոնց կաշին մաքսի ենթակայ չէին՝ եթէ անոնք իրենց բուն տեղը մաքս վճարած էին արդէն: Զիրէրբիւնկէն ներածուած արծաթէն ալ մաքս չէր առնուեր՝ որովհետեւ ան մեծ մասամբ Մոլտովայի իշ-